

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՀՈՍՔ Չորեքշաբթի, 26 Օգոստոսի, 2009

Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի ատենապետ Քեն Խաչիկեանը Երեքշաբթի, Օգոստոսի 25-ին նամակ է յղել Միացեալ Նահանգների նախագահ Բարաք Օբամային, կոչ անելով, որ նախագահը մերժի 9-րդ շրջանի դաշնակցային վճռաբեկ դատարանի Օգոստոսի 20-ի այն վճիռը, որը բեկանում է Հայոց Ցեղասպանութեան զոհերի ժառանգների կողմից Ցեղասպանութեան պատճառով անտեսուած իրաւունքներին վերատիրանալու համար օտար ընկերութիւնների դէմ դատական գործեր յարուցելու Կալիֆորնիայի նահանգային օրէնքը: 9-րդ շրջանի դաշնակցային վճռաբեկ դատարանը այդ վճիռը կայացնելով պնդել է, որ Կալիֆորնիայի նահանգային դատարանները չեն կարող դատական նման գործերով զբաղուել, որովհետեւ Միացեալ Նահանգների կառավարութիւնը պաշտօնապէս որպէս ցեղասպանութիւն չի ճանաչել հայկական ջարդերը: Յայտնենք, որ Կալիֆորնիայի նահանգային դատարանը 2000 թուականին Հայոց Ցեղասպանութեան զոհերի ժառանգներին իրաւունք էր տուել, որ դատական գործ յարուցեն գերմանական երեք ապահովագրական ընկերութիւնների դէմ, որոնք ցեղասպանութեան զոհերի հատուցումները չէին կատարել: Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի ատենապետ Վիզէն Սոնենց Փափազեանը դաշնակցային դատարանի որոշումը ամերիկահայութեանն ուղղուած անարգանք է բնութագրել եւ ազդարարել, որ եթէ վճիռը անփոփոխ մնայ, ապա դա վարձատրութիւն կը համարուի Հայոց Ցեղասպանութիւնը ուրանալու Թուրքիայի կառավարութեան ջանքերին:

* * *

Չորեքշաբթի, Օգոստոս 26-ին, Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը իր ձայնը միացրեց Միացեալ Նահանգների Սենատի երկարամեայ անդամ Թէդ Քենեդիի մահը սզացողներին՝ մատնանշելով այն իրողութիւնը, որ 1962 թուականից ի վեր Սենատոր Քենեդին պայքարել է ջանքեր է գործադրել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման օգտին: «Նա եղել է անկախ Հայաստանի ջատագովը եւ նեցուկ կանգնել Լեոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքին», յայտարարել է Մասաչուսեթսի Հայ Դատի յանձնախմբի համա-ատենապետ Տիգրան Խաչիկեանը: Սենատոր Թէդ Քենեդին տարիներ շարունակ հովանաւորել է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով Կոնգրէսին ներկայացուած բանաձեւերը եւ նամակներ յղել Միացեալ Նահանգների նախագահներին՝ պահանջելով, որ ճանչեն Հայոց Ցեղասպանութիւնը: Նա նաեւ բազմաթիւ ելոյթներ էր ունեցել Սենատի նիստերում՝ դատապարտելով Արցախի ժողովրդի դէմ Ադրբեջանի գործադրած բռնութիւնները եւ աշխատանք տարել այն բանաձեւի վաւերացման ուղղութեամբ, որով կասեցում է Ադրբեջանին ամերիկեան զինուորական օժանդակութիւն տրամադրելը:

* * *

Երկուշաբթի, Օգոստոսի 24-ի երեկոյեան ժամը 6-ին, երեք ամիս նաւարկութիւնից յետոյ, Կալիֆորնիայի Սան Պետրո նաւահանգիստում խարսխեց հայկական «Արմէնիա» առագաստանաւը: Նաւի անձնակազմին Սան Պետրո նաւահանգիստում դիմաւորելու էին եկել Լոս Անջելոսում Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանը եւ հիւպատոսարանի անձնակազմը, լոսանջելոսահայ միութիւնների ու կազմակերպութիւնների ներկայացուցիչներ եւ բազմաթիւ լոսանջելոսահայեր: Համայնքի ներկայացուցիչների բարի գալստեան խօսքերից յետոյ, արշաւախմբի ղեկավար Զօրի Բալայեանը շնորհակալութիւն յայտնելով ջերմ դիմաւորման համար, նշել է, որ սոյն արշաւը նուիրուած է հայ մայրերին, ովքեր օտար երկրներում պայքարեցին հայ լեզուն, երաժշտութիւնը, պատմութիւնը, ազգութիւնը պահպանելու համար: Յայտնենք, որ «Արմէնիա» նաւի երթուղային մեկնարկը սկսել է Վալենսիայից, Մայիսի 28-ին: Հիւսիսային Ամերիկայից յետոյ, այն մեկնելու է Հարաւային Ամերիկա, ապա Աւստրալիա, Հնդկական ովկիանոս, Մինգապուր, Պարսից ծոց, Կարմիր ծով, Միջերկրական ծով, վերջնակէտ ունենալով Բէրլինի նաւահանգիստը:

* * *

Կալիֆորնիայի նահանգապետ Առնոլդ Շուարցնեգըրը Չարլզ Փուչիկեանին Ֆրեզնոյից, նշանակել է նահանգի հինգերորդ շրջանի վճռաբեկ դատարանի դատաւոր: 60ամեայ Փուչիկեանը նախապէս եղել է Կալիֆորնիայի նահանգային Սենատի եւ խորհրդարանի անդամ, ինչպէս նաեւ ծառայել է Կալիֆորնիայի նահանգապետներ Ջորջ Դուքսէլեանի եւ Փիթ Վիլսոնի գլխաւորած վարչակազմերում:

Այս լուրերը տրամադրում են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ **Internet-ով** եւ **Fax-ով**:
Լուրերը կարելի է վերահրատարակել: